

ՀՐԱՀԱՆԳ

ԳՆԱՑՔՆԵՐԻ ԿԱԶՄԻԶԻՆ, ՎԱԳՈՆՆԵՐԻ
ԿՑԻԶԻՆ ՅԵՎ ՎՈԼՈՐՈՂԻՆ—ԳՆԱՑՔՆԵՐԻ
ԿՏՐՈՒՄՆԵՐԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВДЕННОЙ
Академии Наук
СССР

656.2
—
Խ-11

ԱՆԴՐԿՈՎԿԱՍՏԱՆ ՁԵՐԿԱԹԳԻ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

ԲԻՖԼԻՄ

1935

656.2

Կ-11

Թարգմանիչ՝ ՅԵԳԻԱԶՄՐՑԱՆ
Խմբագիր՝ ՍԱՐԳՈՅԱՆ
Թողարկիչ՝ ՄԻՐԿՈՎԻԶ

ՀՅ6-Ա
ՀԱ999

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԻНСՏԻՏՈՒ
ՊՈՏՈԽԵԴԵՆԻ
Ակադեմիա Խառ
СССР

ՀՐԱՄԱՆ

ՀԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ
ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐԻ

14-6 ԽՈԼԵՆՎՐԵՐԻ 1935 թ. № 209/յ

ԳՆԱՅՖՆԵՐԻ ԿՏՐՈՒՄՆԵՐԻ ԴԵՄ ՊԱՅՖԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գնացքների կտրումները, վորոնք մեծ վնասներ են պատճառում տրանսպորտին և յետացնում են գնացքների յերթենեկությունը, յերկրորդ կվարտալում աննշան կրծատումից հետո, առաջին կվարտալի հետ համեմատած, վերջին ամիսներում նորից սկսել են ավելանալ, հասնելով ցանցում ամսական մինչև 2000 կտրումների, միայն I. խմբի ավարիաներով։ Մի շաբաթ յերկաթուղիներում (Մոսկվա—Կուրսկի, Յեկատերինինսկայա և այլն) կտրածները կազմում են

մոտավորապես 1 խմբի խորտակումների և ավարիաների հետո:

Յերկաթթւրդային տրանսպորտի մի քանի հրամանառարների փորձերը՝ բացատրել գնացքների կարումների աճը հենվելով որ-յեկտիվ-տեխնիկական պատճառների վրա— զծի պրոֆիլի ծանրաքաշ և յերկար կաղ-մերի և այլն հերթվում են այնպիսի անվի-ճելի փաստերով, վոր կարումների մոտավո-րապես 60 տոկոսը կատարվում և տափա-քակներում, այսինքն տեղից շարժելիս և զնացքի կացուրդի ժամանակ, ինչպես նաև նրանով, վոր կարումների մեծ քանակը կա-տարվում է թեթև կազմերում (մինչեւ 1000 տ.) և վոչ լրիվ կազմով զնացքներում: Կատար-ված կարումների քննությունը և վերլուծու-թյունը ցույց տվին, վոր նրանց՝ հիմնա-կան պատճառները հանդիսանում են.

1. Գնացքը տեղից վոչ սահուն վերց-նելը, յերբ մեքենավարները գնացքը յետ հրելով, չեն սպասում յետնի վագոնների լրիվ կացուրդին, առաջ են շարժվում և կարում զնացքները:

2. Խստ արգելակելը, վորի ժամանակ յետնի վագոնները վրա յեն վագում առա-

ջինների վրա և հետո ույժով յետ են դառ-նում և կտրվում են: Գնացքների անհամա-ձայնեցրած արգելակումն մեքենավարի և կոնդուկտորական բրիգադի միջնե:

3. Գնացքների անկանոն տանելը կայա-րանքներում (ուրեցող), մանավանդ վերել-քում և բեկման տեղում:

4. Կազմերի անկանոն և անփույթ կը-ցումն-պտուտակումն, յերբ բուֆերային վա-ճանակների միջն մնում են մեծ արանքներ:

5. Վագոնայինների կողմից լծասարքի պարագաների անփույթ զննությունը (և փորձարկումը):

Այսպիսով կտրումների հիմնական պատ-ճառը հանդիսանում և մեքենավարների, կոնդուկտորների, կցիչների, կազմիչների, վագոնների զննիչների և ավտոմատչիչնե-րի, կայարանների և զծերի հերթապահների կողմից իրենց ելեմննտար պարտականու-թյունների չկատարելը, վատ հրահանգելը և նրանց աշխատանքներին թույլ հսկողու-թյունը՝ յերկաթուղային տրանսպորտի հրա-մանատարների կողմից:

Ստուգումը ցույց տվեց, վոր իմ № 83/γ հրամանը և № 204 կարգադրությունը, վո-



բոնք պահանջում են մեքենավարների և
յերկաթուղային տրանսպորտի ուրիշ աշխա-
տողների ինստրուկցիայի ուժեղացնելը, յեր-
կաթուղիների մեծամասնության մեջ ան-
բավարար են անցկացվում, մինչև հիմա մե-
քենավարները նույնիսկ մատակարարված
չեն գծի ստուգված պրոֆիլներով:

Մեքենավարները, կոնդուկտորները, կը-
ցիչները, կազմիչները, վագոնների գննիչ-
ները, կայարանների և գծերի հերթապահ-
ները՝ թույլ դիտեն իրենց պաշտոնեական
պարտականությունները գնացքների կըտ-
րումների դեմ պայքարելու վերաբերյալ:

Հրամայում եմ.

1. Յերկաթուղիների պետերին և յերկա-
թուղիների քաղ-բաժինների պետերին. ձեռք
առնել բոլոր միջոցները կարումները վերաց-
նելու համար: Ընդունել անշեղորեն դեկա-
վարման համար իմ կողմից հաստատված
հրահանողը գնացքների կարումների դեմ
պայքարելու վերաբերյալ (տես հավելված):

2. Յերկաթուղային տրանսպորտի հրա-
մանատարներին տալ հրահանդիներ ստորա-
գրությամբ յուրաքանչյուր աշխատողին,

հրանդել նրան, սիստեմատիկորեն ստուգել
հրահանդիների յուրացնելը և կատարելն աշ-
խատանքի տեղում:

3. Մեքենավարներին, կոնդուկտորնե-
րին, կազմիչներին, կցիչներին, վագոնների
գննիչներին, ավտոմատչիկներին, գծերի և
կայարանների հերթապահներին ճշտորեն
կիրառել հրապարակվող հրահանդիները:

Հաղորդակցության ձանապարհների
ժողովրդական կոմիտար

Լ. ԿԱԳԱՆՈՎԻԶ

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ.

Հաղորդակցության ձահապարհ-
ների ժողովրդական կոմիսար
Լ. Կազանվիլի

14. ն հոկտեմբերի, 1935 թ.

Հ Ր Ա Ց Ա Խ Գ

ԳՆԱՑՔՆԵՐԻ ԿԱԶՄԻՉԻՆ, ՎԱԳՈՆՆԵՐԻ
ԿՑԻՉԻՆ ՅԵՎ ՎՈԼՈՐՈՂԻՆ - ԳՆԱՑՔՆԵ-
ՐԻ ԿՏՐՈՒՄՆԵՐԻ ԴԵՄ ՊԱՅՄԱՐԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

I

Գնացքների կտրումները, գնացքների
կազմիչների և վագոնների կցիչների մեղա-
վորությամբ առաջ են գալիս նրանից, վոր
նրանք՝

1. Զեն պատուակում աշխատող մոտքա-
շը մինչև բուժերային վահանակների քիվ
շիվելը:

2. Վագոնները միացնում են 2 մոտքաշ-
ներից վոչ ավելի ուժեղի վրա:

3. Կրկնակի կցումն չեն կատարում, յերբ
այդ հնարավոր են հարեան վագոնների մոտ-
քաշների ախալերով.

4. Կազմի մեջ միացնում են վագոններ,
վորոնց մետ կցման հանկերն այնքան առաջ
են շարժվում, վոր նույնիսկ լրիվ պատու-
ակորման գեպքում, կցման սարքերը բայց
և այնպես կախվում են:

5. Կազմների մեջ միացնում են պատուա-
կավոր մոտքաշով վագոններ, զբկված բա-
վարար ձկունությունից հողակատերում և
աղատ պատեհուց վիճակերում:

6. Մանեվրաներ սկսելով չեն ստուգում,
հանձնված են արդյոք վագոնների տակից
տակդիրները և սանդալները ու վագոնների
տակ չկմն արդյոք վորեե առարկաներ:

7. Զեռքի արգելակամբ գնացքներում
խառը կերպով տեղափորում են մհծաբեռն-
ման վագոնները յերկունի վագոնների հնաւ:

8. 2 սանանի գատարկ վագոնները և
թեթև բեռնվող 5 տոննից պակաս բեռն-
մամբ վագոնները տեղափորում են բեռնվազ
վագոնների մեջ:

9. Անհավասար կերպով են տեղափորում
ձեռքի արգելակները ձեռքի արգելակմամբ
գնացքներում:

10. Գնացքներում տեղավորում են վագոններ, ռեսորների անհավասար նստվածքով:

11. Գնացքներում դնում են պլատֆորմաներ, յերկուսից ավել ընդհանուր բեռանտակ, բայց վորոնք այդպիսի փոխադրման համար հատուկ հարմարանքներ չունեն:

12. Գնացքների ավտոարգելակային մասի վերջում դնում են վագոններ, վորոնք ունեն միայն միջանցիկ փողեր, այլ վոչ ավտոարգելակային:

13. Վոչ միայն մասնվրաների ժամանակ, այլ նաև գնացքներում միացնում են պտուտակավոր մոտքաշով վագոնները ավտոկցման վագոնների հետ պտուտակավոր մոտքաշի ոդնությամբ, նրա տվառկցման ունկի վրա գցելու միջոցով, այն ժամանակ, յերբ գնացքներում թույլատրվում ե այդպիսի վագոնների միացնելը միայն անցման հարմարանքում:

14. Ավտոարգելակային գնացքներ կազմելիս բոլոր բազուկները չեն միացնում:

15. Սկսում են մասնվրաները նախորդ չպարպելով ավտոարգելակավոր վագոնները:

16. Գնացքներում դնում են տեխնիկա-

կան անսարքություններով վագոններ, վորոնք սպառնում են յերթեկության անվտանգությանը:

17. Մանեվրաների ժամանակ ազդանըշաններն անժամանակ են տալիս:

II

Գնացքների կտրումները չթույլ տալու համար գնացքների կազմիչները և վագոնների կցիչները պարտավոր են ճշտությամբ կատարել հետևյալ կանոնները.

1. Ապրանքաար վագոնները կցելիս պտուտակել աշխատող մոտքաշը, մինչև բուֆերային վահանակների թեթև շփկելը, վորը ձեռք և բերվում մոտքաշի վիճուի մեջ պտույտով բուֆերային վահանակների շրփկելուց հետո:

2. Մարգատար վագոնները կցելիս, ինչպիս նաև ապրանքատար վագոնները, վորոնք կանգնած են մարգատարներից առաջ, աշխատող մոտքաշը պտուտակել այնպիս, վորպեսզի բուֆերային վահանակները իրարից չբաժանվին գնացքի ընթացքի ժամանակ, վորը ձեռք և բերվում մոտքաշի վիճ-

տի յերկուշյերեք պատույտներով բուֆերտ-
յին վահանակների շփվելուց հետո:

3. Կավ հիշել, վոր պատուտակային կըց-
ման սարքերը բաշխվում են ըստ կարողու-
թյան (սկսած ամենտթույլից) հետեյալ
կարգով. ա) նորմալ, բ) ուլենգուտի, գ)
ուժեղացրած 1905 թ. որինակի, դ) 1916 թ.
որինակի, յե) միացրած 1912 թ. որինակի:

4. Զանազան տիպի կցման սարքերի
դեպքում կցումը կատարել միշտ ավել ու-
ժեղ ափակ մոտքաշի ոգնությամբ:

5. Բոլոր գեպքերում, յերբ այդ թույ-
լատրվում ե մոտքաշների ափակերով, կա-
տարել վազոնների կրկնակի կցումն: Սկըզ-
բում վագոնները կցվում են այն մոտքա-
շով, վորը պետք ե լինի աշխատող, իսկ
հետո յերկրորդ չաշխատող մոտքաշի կարճ
ճանկն անց ե կացվում աշխատող մոտքա-
շի ողերի մեջ և ցցվում ե հարեան վագոնի
ճանկի վրա. Այդպիսի կցման ժամանակ
յերկրորդ մոտքաշը հանդիսանում ե, վոր-
ուես պահեստի և սկսում ե աշխատել միայն
աշխատող մոտքաշի կտրվելու դեպքում:

6. Կրկնակի կցումն կատարել բոլոր գեպ-
քերում, ցուցված +նշանով ստորև բերված

աղյուսակում (- նշանը նշանակում ե, վոր
կրկնակի կցումն չե թույլատրվում):

Հետակառնություն կարգ	Մոտքաշների տիպերը	Եղանակ	Արեւելական թույլատրություն	1912 թ.	1916 թ.	Միացրած
1	Նորմալ	-	+	-	-	+
2	Ուլիհնգուտի	+	+	-	-	+
3	Ուժեղացրած 1912 թ.	-	-	-	-	+
4	1916 թ. որինակի	-	-	-	+	+
5	Միացրած	+	+	+	+	+

7. Կրկնակի կցումն անհնար լինելու
դեպքում, աղտօն (աշխատանքում չմասնակ-
ցող) մոտքաշը պատուակել մինչև մերժումը
և թողնել կախված դրությամբ:

8. Լոկոմոտիվը գնացքի հետ միշտ միաց-
նել կրկնակի կցմամբ, ըստ վորում աշխա-
տող պետք ե լինեն տեսնդերի, կամ լոկոմո-
տիվի մոտքաշները:

9. Պատուակավոր, մոտքաշով վագոններ
հայտնաբերելիս, վորը զբկված լինի հողա-
կալերում բավարար ձկունությունից և
վիճակներում ազատ պատվելուց, — այդ մասին

անմեջապես հայտնել վագոնային սպասարկեան աշխատողներին (կարգադրիչ կայարաններում—զննիչն, միջանկյալներում—յուղիչն) նրանց սարքին դրության մեջ բերելու համար:

10. Վագոնները, վորոնց մոտ կցման սարքերը կախվում են նույնիկ նրանց լրիվ պատուտակցման գեղագում՝—անմիջապես ներկայացնել վագոնների զննիչն, կամ յուղիչն կցման սարքը փոխարինելու, կամ սարքի բերելու հօմար բոլվերային բաժակներում զսպանակների յետել մեջդիրներ և ողակներ զնելու միջոցով:

Հակառակ գեղագում այդպիսի վագոնները հանել դնացքից:

11. Թույլ չտալ վորպեսզի աշխատող մոտքաշի վիճացը մտնի ճանկի գլխիկի մեջ:

12. Թույլ չտալ չաշխատող մոտքաշի ճանկի զնելը միևնույն վագոնի լծասարքի ճանկի մեջ:

13. Թույլ չտալ ազատ մոտքաշի գցելն աշխատողի վերկից:

14. Ավտոկցման վագոնների միացնելը պատուտակավոր մոտքաշով վագոնների հետ գնացքներում կատարել բացառապես դրա

համար հատկապես նշանակված անցնման հարմարանքի ողնությամբ:

15. Ավտոարգելակային գնացքներում անպայման միացնել բոլոր միացման բազուկները:

16. Ավտոարգելակավոր վագոնների կըցման սարքերի զատումից առաջ յերկու ծայրերում փակել ծայրի ծորակները, բաժանել միացման բազուկները և նրանց կախել կախոցների վրա:

17. Ավտոարգելակային գնացքները կաղմելուց առաջ անպայման նրանց պարպել (ազատել ողից):

18. Ավտոարգելակավոր վագոնները միացնելիս սկզբում միացնել կցման սարքերը, իսկ հետո միացնել միացման բազուկները և բանալ ծայրի ծորակները:

19. Գնացքի ավտոարգելակային մասի վերջում անպայման զնել ավտոարգելակով վագոն, այլ վոչ թե միայն միջանցիկ փողունեցող վագոն:

20. Մաներաներ սկսելով, նախորոք վագոնների տակից հանել տակգերները, սահմանները և ուրիշ առարկաները:

21. Մանեվրաներ կատարելիս ժամանակին
տալ «կամաց» ազդանշանը:

22. Վագոնների տեղափորելը գնացքնե-
րում կատարել ճշտությամբ, համաձայն
գնացքների կազմիչի և վագոնների կցիչի
գործող հրահանգի: Ավտոկցման վագոնները
պետք ե դրվեն ապրանքատար գնացքների
դիմում, անկախ սոնիների թվից և այլ վա-
գոնների բնունումից:

23. Արգելակավոր վագոնները ձեռքի ար-
գելակմամբ հավասարապես տեղափորել ամ-
քողջ կազմում, շեղումներ թույլ տալով վոչ
ավել քան 2—3 վագոնի նկատմամբ:

24. Ավտոարգելակավոր վագոնները մի-
ջանցիկ փողեղով վագոնների միջև տեղա-
փորելիս պահպանել հետեւյալ կարգը.

ա) Լոկոմոտիվից հետո վոչ ավել քան 8
սոնիներ միջանցիկ փողերով.

բ) Գնացքի միջին մասում ավտոարգե-
լակավոր վագոնների միջև վոչ ավել, քան
16 սոնիներ միջանցիկ փողերով.

գ) Գնացքի պոչում վերջին ավտոարգե-
լակավոր վագոնից հետո դնել վոչ ավել,
քան 6 սոնիներ միջանցիկ փողերով:

III

Գնացքների կազմիչի, վագոնների կցիչի
վրա դրվում ե լրիվ պատասխանավու-
թյուն վարչական և դատական կարգով
ներկա հրահակիցի ճշտորեն կատարման հա-
մար:

Շահագործման կենտրոնական
կառավարչության պետ՝


ԱՐՆՈԼԴՈՎ

◇



Տպ. «Զարյա Վաստոկա» Ա. Ֆ. Մյասնիկյանի անդ

Գաղվեք 2494 Գլամելիս Բ-1335 Թանակ 200-



«Ազգային գրադարան



NL0299274

24.425

5 883

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ПОСТОЯННОГО ДЕЯНИЯ
Академии Наук
СССР

ИНСТРУКЦИЯ
составителю вагонов, спешщику
и скрутчику вагонов по борьбе
разрывами поездов.